

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ*

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՆՈՒԿՅԱՆ

—իւղ՝ երկիւղ (հմմտ. երկնշել, երկեայ). ծագում է հ.-հ. *—tlo- ածանցից՝ նախորդող երկի— հիմքով (*duitlom> երկիւղ). *—tlo- ածանցն ընդհանրապես ցույց է տալիս միջոց, բայց կարող է հանդիս դալ բայանվանական արժեքով. հմմտ. հ. հնգկ. hōtra- «զոհաբերութիւն», հ. իռլ. gíall, ուելս. gwistl «թշնամութիւն», բրետ. goestl «զոռշութիւն» (օրինակների համար տե՛ս Olsen, 1988, 12—13).

—իւն՝ բախիւն, գոչիւն, լալիւն, սաւսափ/իւն, փայլիւն. ծագում է հ.-հ. *—lon- ածանցից (հմմտ. լատ. reg!o, սեռ. -lōnis «երկիր»), որ, թերևս, մասամբ խառնվել է հ.-հ. դերբայական *—mno-ով կազմութիւնների հետ, ինչպես ցույց են տալիս գոչիւն—գոչումն, լալիւն—լալումն տիպի զուգահեռ ձևերը. թերևս միևնույն ածանցն է առկա մթագնած հիմքով անիւն, անկիւն, արդիւն, արիւն, ներիւն բառերում.

—իւր՝ բերիւր «բերրի» (տե՛ս բերրի). թերևս ծագում է հ.-հ. *—tero- ածանցի ձայնդարձային *—tro- ձևից՝ նախորդող —e-ով.

—իֆ՝ անետիֆ, դոււտիֆ, կեղծիֆ, նաւաստիֆ, շարիֆ. կազմված է —ի ածանցից և —ֆ հոգնակերտից.

—կէն՝ բունկէն (հմմտ. բոյն), ծակոտկէն, կոնկէն, նիւկէն, նանկէն. հաճախաբար ծագում է իրան. -kēn (*—k-aiṇa-) ածանցից (հմմտ. bīm'kēn «սարսափելի»՝ bīm «սարսափ» բառից).

—կի՝ լուցկի. հաճախաբար կազմված է —իկ և --ի ածանցներից.

—կի(ն). տես —(ն)կի(ն).

—կոտ՝ դանդաղկոտ, ծիծաղկոտ, յաջաղկոտ, վախկոտ, ցասկոտ. կազմված է —կ— ածականից և —ոտ ածանցից, ընդ որում կան —կ—ով և առանց —կ—ի տարբերակներ՝ նախանձկոտ—նախանձոտ. ավելի քիչ հաճախական է —կ—ն դիտել որպես —ուկ—ի կամ —իկ—ի շեշտակորույս տարբերակը. թեև կան վաղվաղուկ—վաղվաղկոտ զուգահեռ ձևերը, բայց դրանք եղակի են կանգնած՝ —կոտ—ով այլ բառերի համար —ուկ—ով կամ —իկ—ով տարբերակներ չեն հանդիպում (օրինակ՝ դանդաղկոտ—ի դեպքում չկան դանդաղուկ կամ դանդաղիկ տիպի ձևեր).

—կու՝ յաղթկու, յուժկու. կազմված է —կ— ածականից և —ու ածանցից. հմմտ. յաղթկու—յաղթու.

—նակ՝ թեմակ. ծագումը հայտնի չէ. իրանական զուգահեռ չի հավաստված.

—նան՝ դինենան, տիրենան. ծագում է իրան. -čan (-čanaḥ) «սեր» բաղադրիչից (հմմտ. հ. պրսկ. Aspačanaḥ «ձիասեր», այլև պրթ. šadčēn «երջանիկ»՝ šad «սուրախութիւն» հիմքից) և հանդիպում է նաև իրանական փոխառութիւններում՝ դաւանան, խրախնան.

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1994, № 1—2.

—մ՝ բուսմ (հմմտ. բրմել՝ բրել ձևի կողքին), մեղմ (հմմտ. մեղկ) օերմ (հմմտ. օեր). հին շրջանում արդեն չի գիտակցվել և բործուն չի եղել. ծագում է հ.-հ. *mo- ածանցից. հմմտ. հուն. μή- (mo- հայ. օերմ).

—մն՝ կողմն (հմմտ. կող), ջերմն (հմմտ. ջեր), սերմն (հմմտ. սերել, սերունդ). ծագում է հ.-հ. *men-/mn- ածանցից և հին շրջանում գործուն չի եղել.

—ն՝ բան (հմմտ. բայ լատինացի, բայ, բան), կեանք-ն (հմմտ. կեայ). բեռն (հմմտ. բերեմ), բակն (հմմտ. բակ), լոյսն/լուսն (հմմտ. լոյս). ծագում է հ.-հ. *no կամ *ōn- ածանցից (հմմտ. ավեստ. na- փայլուն և հայ. լոյսն/լուսն lu-ōn) և հին շրջանում արդեն գործուն չի եղել.

—նի՝ գաղանի, յալանի, նախնի. հնարավոր է երկու ենթադրություն. 1) ծագում է հ. ս. *en(i)h-/-a- բարադուլ ածանցից (*en(oi)-+*-i(i)h-/-ā), կամ ս. *ni(i)h-/-a- տարաբանակից՝ նախորդող -ի-ով (հմմտ. յալան, -ի-, ից). 2) լատինացի է համեմատաբար ուշ՝ -ուն-ից և երկրորդային -ի ածանցից (հմմտ. բարուն—թուրնի).

—շի՝ բուրշի, լայնշի. քանի որ հիմքերը հ.-հ. ծագման են, պետք է ենթադրել հնդեվրոպական ծագում, թերևս *isēh(i)- (isēh(i)-) և *-i(i)h-/-a- շի է առկա նաև գոլո(r)շի բառի մեջ՝ ո հիմքային տարրով և ը-ի համաբանական հավելմամբ (հմմտ. բուրշի), ընդ որում գոլ-ը նույնպես հնդեվրոպական ծագում ունի. ժամանակակից հայերենում տարածվել է գոլուշի ձևը, և ուրշի-ն ընկալվում է որպես ինքնուրույն ածանց.

նգ՝ նորոգ. թեև հիմքը (նոր-) հնդեվրոպական ծագում ունի, բայց —նգ-ի ծագումը պարզ չէ. եթե ինչպես փորագ/փորոգ ձևի մեջ գ-ն ք-ի տարբերակն է, ապա վերջինիս համար կարելի է ենթադրել հնդեվրոպական ծագում՝ *ko-ից՝ նախորդող հիմքային ո-ով (հմմտ. նոր, ոյ).

—ոդ. տե՛ս —ադ. —ոդ.

—ոյ՝ աջոյ, առաջոյ, արտաքոյ, երեկոյ, եփոյ, (գ)այգոյ, յետոյ, վերոյ. հավանաբար ծագում է հ.-հ. *es/os- ածանցից (հմմտ. *re^uos-os> երեկոյ)՝ —յ-ի ուշ հավելմամբ, կամ չբացատրված —ոյ ածանցմամբ, ինչպես *u(i)h- > գոյ, մասամբ էլ թերևս, թեմատիկ հիմքերի սեռական-տրականից՝ *o(i)h- —ոյ ածանցմամբ.

—ոյթ՝ աւագոյթ, երեսոյթ գայրոյթ, ծածկոյթ, ծերոյթ, ձանձրոյթ, սովորոյթ. ծագում է հ.-հ. *i- ածանցից՝ նախորդող *eu-ով. հմմտ. հուն. εὐ- «վերջ, աշխարհ» (Meillet 1936, 76):

—ոյլ՝ դրոյլ «դռնվան» (հմմտ. դռն, դրացի). ծագում է հ.-հ. *tel- ածանցից՝ նախորդող հիմքային *o- ձայնավորով (*dhurotel> դրոյլ). հին շրջանում դռն և դրոյլ բառերի կապը հավանաբար արդեն մթազնված է եղել.

—ոյկ՝ խառոյկ, ձորձոյկ, պարոյկ. հավանաբար ծագում է իրանական -ok (-avā-ka-) ածանցից, ինչպես, փոխառյալ թակոյկ (takōk), մակոյկ (makō) բառերում.

—ոյն՝ գիշերոյն, իսկոյն, ողջոյն, ուրոյն, ձեգոյն, ձերոյն, մեգոյն, քեգոյն, մակրայական այս ածանցի ծագում է ածանցելի հիմքերի սեռական-տրական հոլովածներից՝ ո հոգի հավելմամբ. հմմտ. գիշերոյն—գիշերոյն, ողջոյն—ողջոյն, ձերոյն—ձերոյն. համաբանությամբ տարածվել է նաև հիմքային այլ ձևերի վրա. անագորոյն բառի ծագումը հայտնի չէ, և նրա կազմությունը ոչ պարզ, ուստի նրա՝ —ոյն-ով կազմված լինելը կասկածելի է (մասնավորապես հանդիպում են —ոյն-ի փոխարեն —ուն-ով, —ուն-ով, —ովն-ով ձևեր). քանգոյն բառի —ոյն-ը ածանցական չէ. այս բառը իրանական ծագում ունի՝ քանգոյն <hangōn, ընդ որում —գոյն-ը (gōn) արմատական է.

—ոյր՝ հաստոյր. թերևս ծագում է հ.-հ. **-tero-* ածանցից, որ առկա է նաև դերանվանական ոյր **^ho-tero-* ձևի մեջ՝ նախորդող **-o-*ով.

—ոյ (հմմտ. —այ, —էֆ)՝ ամաթոյ, բաշխոյ, բարոյ, գահոյ, գործոյ, ժամոյ, խորովոյ, հանոյ, հիւրոյ, յետոյ, շափոյ, պիտոյ. կազմված է —ոյ տարրից, որ նույնն է սեռական-տրականի —ոյ-ի հետ (հետադարձում համարանությունը տարածված նաև սեռական-տրականում —ոյ շունեղող հիմքերի վրայ), և —ի հոգնակերտից. հմմտ. ամաթ—ամաթոյ—ամաթոյ, գործ—գործոյ—գործոյ.

—ովին (հմմտ. —եփին՝ բուրովին, գլխովին, երամովին, ընջովին, խալամովին, կարն(ն)ովին, հարպովին. իւրովին, ձերովին. կազմված է —ով տարրից, որ համընկնում է գործիականի —ով-ի հետ, և —ին-ից, որի համար հնարավոր է երկու ենթադրություն. այն կամ —ին ածանցն է (հմմտ. վերին, ներին), կամ —վ-ի համար հիմք տված հ.-հ. **-bhi-*ի **-i-*ն՝ պահպանված ցուցական **-no-* հայ. —ն տարրից առաջ.

—ոտ՝ բորոտ, դեղոտ, ժանգոտ, մոխրոտ, տաղտկոտ, փութոտ. երկնշոտ, լիանոտ. հավանաբար ծագում է հոտ բառից՝ նույն հարաբերությամբ, ինչ —առ—հատ, կամ, որ ավելի քիչ հավանական է, —ոտ ածանցի համար հիմք հանդիսացած **-o-*ի (հմմտ. հուն. *-ος*) կարճ ձայնավորով **-od-* ձևից (այսպիսի ձև հ.-հ. այլ լեզուներում չի ավանդված).

—ոտի՝ ատարոտի, գագրոտի, կալոտի, հնոտի, մեռելոտի, ոսկրոտի, չիճոտի, սնոտի, ցնցոտի, փորոտի. ենթադրվում է, որ կազմված է —ոտ և —ի ածանցներից, բայց —ոտ-ով և —ոտի-ով ձևերի զուգահեռություն չի նկատվում (ծակոտ-ի դիմաց ծակոտի ձևը նոր կազմություն է). կա միայն —առ-ով և —ոտի-ով ձևերի մասնակի դուռահանություն՝ ոսկրոտ—ոսկրոտի.

—որ (հմմտ. —ար, —իր, —ուր)՝ բեկոր, գլոր (հմմտ. գիլ), երեկոր, հատոր, մոլոր (հմմտ. մոլ-ի, մոլար), սին-լոր, այլև առանձին չգիտակցվող հիմքով՝ բոլոր. ծագում է հ.-հ. **-(e)ro-* ածանցից՝ հավանաբար հետադարձ առնմանությամբ ծագած նախորդող **-o-* ձայնավորով **ye-lo-ro* > **ye-lo-ro* >

լորոյ, **reg^uos-lo-ro* > **reg^uos-o-ro* > երկլոր, **molə-ro* > **mol-o-ro* > մոլոր և այլն:

—որդ՝ ավելորդ, լծորդ, կցորդ, մնացորդ. հավանաբար ծագում է հ.-հ. **-dhiro-* ածանցից՝ նախորդող **-o-*ով. հ.-հ. այս ածանցը ցույց էր տալիս գործողության միջոց, գործիք, բայց հետո հայերենում ընդլայնել է իր գործառնության շրջանակները՝ անձերի դեպքում նշանակելով անձերի անուններ (անդեորդ, սայլորդ և այլն), թվականների դեպքում նախորդ —իր-ի (տե՛ս) հետ միասին՝ կարգ (երկրորդ, երրորդ, չորրորդ և այլն). այս վարկածը առանձնապես հավանական կլինի, եթե ճիշտ է Բ. Օլսենը, որ կոկորդ—ը լիսեյնում **g^uo-g^uor-tro-ի* (**-tro-*ն **-dhiro-*ի տարբերակն է).

—ոց՝ արգելոց, արթոց, բայոց, հալոց, ձմերոց, մրջինոց, խալոց, խարտոց, մխոց, ջնջոց. ծագում է հ.-հ. **-sko-ja-* ածանցից՝ նախորդող հիմքային **-o-* ձայնավորով. տեղացույց իմաստը զարգացել է հայերենում.

—ու՝ կծու, հասու, հատու, յաղթու. հավանաբար ծագում է հ.-հ. դերբայական **-u-* ածանցի իգ. **-usja* ձևից. հանդես է գալիս նաև —ածու (ակնածու), —առու (մտառու), —աբու (գինարբու, հմմտ. գինարբուֆ), —արկու (բանարկու), —ըմպու (գինըմպու), —կալու (ակնկալու), —կացու (վերակացու) բաղադրիչներով բարդություններում.

—ու՝ ուրու, եղբւրու, մեղու, մալու, ուրջու. կազմված է հ.-հ. հիմքային **-u-* և **-jo-ja-* ածանցի բաղադրությամբ՝ **meluša* (**-u-*ն **medhu-* «մեղր» բառի ազդեցությամբ) > մեղու, —աց, **mafruša* > մալու (հմմտ. հուն. *μυρραινα*). յալու «խորթ հայր» ձևը համարվում է կազմված մալու-ի

համարանութամբ (փոխանակ համիմաստ՝ յաւալ-ի), բայց հմմտ. հուն. πατριος՝ «խորթ հայր» որ ենթադրում է *patruilos > հաւում.

-ուած՝ անկուած, արդուած, գործուած, հաստուած. կազմված է բայական -ու- հիմքակազմ տարրից (հմմտ. կալուած—կալում, հարուած—հարում, հեղուած—հեղում, յաւելուած—յաւելում) և -ած վերջածանցից. հետագայում տարածվել է -ու-ով հիմք շունեցող ձևերի վրա (հմմտ. գործուած—գործեմ).

-ուակ (-աւակ)՝ կարուակ (-աւակ) «կոշկակար». եթե կար-ը ծագում է քարթվելական (հատկապես զաներեն) աղբյուրից (հմմտ. վրաց. kar-կր- «կապել», k-r- «կարել»), ինչպես կարծում է Ֆոգտը (NTS, 9, 333), ապա կարելի է կապ տեսնել հիմքային -av-/-v-տարրերի (հմմտ. վրաց. kar-կր-ից k-r-av- հիմքը, այլև k-r-ի- k-rva բայանունը) ու կարու- (կարու-ի -աւ/ու- տարրի միջև և -ակ-ը դիտել որպես ածանց. եթե ճիշտ է Հ. Աճառյանը (ՀԱՔ, 2, 542), որ անհավանական է համարում հայերեն ձևերը բխցնել վրացերեն համապատասխան ձևերից, ապա թերևս պետք է ենթադրել ընդհանուր փոխառություն ուրարտերենից, մանավանդ որ առկա է ընդհանուր նոստրատիկ արմատ (ИЛЛИЧ-СВИТЫЧ, 1, 321—323), և այն կարող էր ծառանգել ուրարտերենը որպես նոստրատիկ լեզու.

-ութիւն՝ երիցութիւն, բողոքութիւն, ծերութիւն, յարութիւն. ծագում է կամ հ.-ե. -tiō- ածանցից (հմմտ. լատ. -tio, սեռ. -tio), կամ -ույթ- և -իւն ածանցների բաղադրումից (հմմտ. ծերույթ—ծերութիւն). առաջին դեպքում պետք է ենթադրել *tiō-ից առաջ սկզբնական *eu/ou երկբարբառ, որից հետո *t-ն յ-ի շի փոխվում (-ույթ < *eu-ti-/-ou-ti-), կամ կարծել, որ *-(ē) > -յի փոփոխության կողքին եղել է *ti- > ք փոփոխություն. վերջին վարկածը երևի ավելի հավանաբան է, եթե նկատի ունենանք -ութիւն-ով մի շարք բառերի -ու-ի համընկնելը ածանցելիների հիմքային և ածանցական ու-ի հետ. երեց, սեռ. երիցու—երիցութիւն, այլև հագածու—հագածութիւն, հագաբարձու—հագաբարձութիւն և այլն.

-ուլ՝ բաթուլ, կափուլ. թեև բաթ. կափ հիմքերի հ.-ե. ծագումը չի հաստատված, բայց հավանական է -ուլ ածանցի -յ-ի հ.-ե. ծագումը՝ *-lo- ածանցից (նախորդող -ու- ձայնավորով), որ ունեցել է նաև փոքրացուցիչ-փաղաքշական արժեք.

-ուկ՝ այրուկ (հմմտ. այրիկ > բրբռ. էրիկ), ծիծառնուկ, մծղուկ, պուտուկ, պտուկ. ինչպես -իկ-ը (տե՛ս), ծագում է հնդեվրոպական *kon- բաղադրյալ ածանցից՝ նախորդող *-u- հիմքակազմ տարրով (հմմտ. մանուկ—մանր, սեռ. տր. մանու). այս նույն -ուկ-ն է արդյոք, որ համարանութամբ տարածվել է բուսանունների վրա՝ ժախուկ, կանեփուկ, հաճախուկ, մեղրուկ, ինսուրուկ. բողկուկ-ի դեպքում -ուկ-ն՝ ակնհայտորեն փոքրացուցիչ-փաղաքշական է.

ուկ՝ գեղջուկ հաքցուկ, հեղուկ, ջերմուկ. ինչպես -իկ-ի դեպքում, կարելի էր ենթադրել իրանական ծագում, բայց համապատասխան իրանական հակադրվող հիմքերը սակավադեպ են՝ շնորհուկ, պարտուկ. ավելի հավանական է ենթադրել հին -ու-ով հիմքերից -կ-ով այլ ձևերի համարանութամբ տարածված կազմություններ. քիչ հավանական է -ուկ-ի համար վերականգնել հ.-ե. *-u-g-.

-ումի՝ աշակերտումի, աստուածումի, բագումի, մարգարէումի, սրբումի, ֆրմումի. հավանական է այս ածանցի իրանական ծագումը, բայց ստուգաբանության եղած փորձերն առայժմ լիովին համոզիչ չեն. ըստ Մարկվարտի (1931, 28)՝ -purhi > -urhi, -uhi, ըստ Բենվենիստի (1945, 74)՝ *-brya > *-wrhr > *-wrhi > -urhi. ըստ Շանիճիհ՝ urhi = ուրի- (աւրի-նրդ բառի մեջ).

-ումն (տե՛ս -մն)՝ իմացումն, լիւմն, հոլովումն, մատուցումն. ծագում է հ.-ե. *-men-/-mō- ածանցից՝ նախորդող -ու հիմքային տարրով (հ.-ե. -eu/u-). հմմտ. գելումն—գելում, երդումն—երդուայ (երդում < *երդումն).

—ուն՝ ասուն, արբուն, գործուն, իմաստուն, շարժուն. ծագում է հ.-հ. **u-no-* ածանցից, թերևս մասամբ նաև միջին սեռի դերբայական **-o-meno-* ածանցի ձայնդարձային **-o-mno-* ձևից, ինչպես կարծում է Ա. Մելեն (**-mn-*—ուն անցմամբ). հնարավոր է ենթադրել, որ այս ածանցով կազմված դերբայական տիպի ձևերն են հիմք տվել —նուլ տիպի բայերի համար՝ այտ—նուլ այտունուլ, զարբնուլ < զարթունուլ (հմմտ. զարբուն), մածնուլ < մածունուլ (հմմտ. մածուն) և այլն (Джагьян, 1982, 186).

—ունակ՝ բնականակ, լուսունակ, մարունակ, նմանունակ, պարզունակ, վարձունակ, ֆառունակ, ֆրիսառսունակ. ինչպես ցույց է տալիս կենսունակ բառը, —ունակ ածանցակերպը ծագում է ունակ «ունեցող» ածականից (ունիմ բայից. հմմտ. և ընդունակ). նկատի ունենալով —ունակ—ով իրանական հիմքերի նշանակալից թիվը՝ թերևս կարելի էր ենթադրել միջին իրանական ածականակազմ *u-na-* ածանցի հետ բաղադրություն.

—ունդ (տե՛ս —անդ(ն))՝ ելունդ, ծնունդ, սերունդ, սնունդ. հավանաբար ծագում է հ.-հ. **-ti-* ածանցից՝ նախորդող **-o-*. կամ **-u-*— հիմքային տարրով (հմմտ. թերևս, ելանել, ելունդ բառերին ցեղակից հուն. ελεω-νυ-ν, ελεω-ν-ν, որից է *νυ-ν* «բշեխ»).

—ունի՝ արբունի, գործունի, ծերունի, մերունի, տերունի. բաղկացած է —ուն և —ի ածանցներից. —ի ածանցի առկայություն մասին են խոսում նախ՝ խնամի—խնամունի դուգահեռը, երկրորդ՝ խխունջն ձևի կողքին խխնջուն (և խխնջին)—խխնջունի դուգաձևերի առկայությունը, երրորդ՝ արբունի, ծերունի բառերի՝ առանց —ի—ի *արբուն, *ծերուն ձևերի համար ստուգաբանական հավաստի դուգահեռների առկայությունը. արբունը կարող է լինել հունական հին փոխառություն (αἰών, -ωνος «առաջնորդ. հրամանատար. տեր, արքա, թաղավոր»), ծերունը—ը (ծեր—ի կողքին) բնիկ հնդեվրոպական ձև է՝ դուգահեռ հ. հնդկ. जातु-, հուն. γέρων, -ωνος «ծեր, ծերունի», բառերին, որոնց համար ենթադրվում է հին դերբայական ձև (Chantraine, 218). —ունի—ն նույնպիսի կաղմություն է, ինչ —անի—ն (գեղանի), —ենի—ն (եան—ի) և —նի—ն (գաղտ—նի). իհարկե, —ունի—ով ձևերի տարածման մեջ դժվար է ժխտել ուրարտական ենթաշերտի ազդեցությունը. թերևս այս նույն ծագումն ունի տիկնունի «տիկնանոց» բառի —ունի—ն՝ իմաստային տեղաշարժով.

—ունիք՝ Ամատունի, Արծրունի, Կնթունի, Կնունի, Մաղխազունի. ցեղանվանական ածանց, որ հավանաբար ծագում է ուրարտերենից.

—ունֆ՝ արտևանունֆ, երիցունֆ, խոչակունֆ, խրախունֆ, կոչունֆ, հրաշունֆ, մկանունֆ, ցցունֆ. համաքանակերտ այս ածանցը ծագում է հ.-հ. **-n-*ով հիմքերի հոգնակի **-on-es* ձևից՝ հանդիպելով —ն—ով և —ը—ով վերջացող մի շարք բառերի հոգնակիում՝ բռն—բռնունֆ, հարսն—հարսունֆ, ողն—ողնունֆ, տռն—տռնունֆ՝ և բառը—բառնունֆ, մանր—մանունֆ. մի կողմից՝ —ն—ով հիմքերի վաղ անկումը և մյուս կողմից՝ —ը—ով ձևերի հոգնակի ձևերի անկախ գիտակցումը հանգեցնում են —ունֆ—ի անկախացմանը որպես հավաքական հոգնակերտի. այս գործընթացը հար և նման է —ինֆ—ով ձևերի տարածման գործընթացին.

—ուչ. տե՛ս —իչ.

—ուսա՝ (հմմտ. —աստ, —եստ, —իստ)՝ ապրուստ, գալուստ, ելուստ, թափուստ, կորուստ, հաբուստ, փախուստ. ծագում է հ.-հ. **-sti-* ածանցից՝ նախորդող —ու—ով, որ սկզբնապես հիմքային ձայնավոր է եղել. հմմտ. թափու—յանել, կորուսանել, հաբուլ—հաբուցանել (Benveniste, 1962, 95. G. Oppin, 1975, 95). հավանական է հ.-հ. **sti-*ի ծագումը **-es/-s-* և **-ti-* ածանցներից (Չահուկյան, 1959, 263).

—ուսաք՝ ամենուստ, այլուստ, անդուստ, առաջուստ, արտաֆուստ, բացուստ, խաբուստ, հեռուստ, վերուստ. ծագում է ուստ «որտեղից» բառից, որի ծագումը պարզ չէ. հավանական է ու—ի մեջ տեսնել հ.-հ. **k^u*— մակբայա—

կան հիմքը, բայց դժվար է բացատրել -ստ-ն (-dh-to-h^h). այս բացատրությամբ -ուստ-ով ձևերը կապ չունեն իրան. naxust առաջին ձևի հետ.

-ուտ՝ աղբուտ, աւագուտ, դալարուտ, բաւուտ, ծանծաղուտ, մացառուտ, շամբուտ, տղմուտ. հնարավոր է երկու մեկնություն. կամ ներկայացնում է -ուտ ածանցի տարբերակը և ծագում է նուտ բառի *նուտ (հմմտ. բրբռ. հառուտ) տարբերակից, կամ ստուգաբանորեն կապված է հուն. -ωτος: ածանցի հետ (ἀφύτωνος: «ավազուտ»՝ α-φύτος: «ավազ» բառից) և ծագում է հ.-հ. -οι-ε: ենթադրյալ ածանցից (Bugge, 1899, 38. հմմտ. նաև Meillet, 1962, 182, Greppin, 1975, 144). անհավանական է իրանական ծագման ենթադրությունը (Greppin, 1975, 145).

-ուր (հմմտ. -ար, -իր, -որ)՝ բափուր, բաֆթաֆուր «թաքուն, ծածուկ, թաքնվելով» (հմմտ. բաֆ-չ-իլ), սլուր, այլև անկախ չգիտակցվող հիմքով՝ բլուր. ծագում է հ.-հ. -ro- ածանցից՝ նախորդող համաբանական կամ o-ից ծագող -ու-ով (հմմտ. բաֆուր-բաֆթաֆուր և *bhlō-ro> բլուր). սլուր-ի հիմքը հավանաբար *սուլ-ն է, որ պահպանվել է սլաֆ բառի մեջ:

-ուրդ՝ արձակուրդ, ժողովուրդ, խառնուրդ, խորհուրդ, կացուրդ, յագուրդ, յամուրդ. ծագումն անհայտ է. թեև հանդիպում են կացուրդ-կացուրդ, կցուրդ-կցուրդ զուգահեռ ձևերը, բայց դժվար է -ուրդ-ը համարել -որդ-ի տարբերակը, մանավանդ եթե նկատի առնենք -ուրդ-ով հիմքերի գերակշռող մեծամասնության ոչ հնդեվրոպական ծագումը (հնդեվրոպական են միայն յագ <*sac- և, թերևս, կաց <*k^ulθ-sk- հիմքերը):

-ուց՝ ալուց, գալուց, խալուց, գրգուց, ննդուց, սպիտակուց. ծագում է հ.-հ. *-sko- ածանցից՝ նախորդող -ու- հիմքային տարրով, բայց հետագայում ընդհանրացել է նաև այլ հիմքերի համար հմմտ., թերևս, խալուց <*khaidu-sko-? (-u-ով հիմքի համար հմմտ. հ. հնդկ. ॐ- ևլուսերևույթ, լուսավորություն, պատկեր», գոթ. haidus «եղանակ» (*լուսերևույթ). ոչ հնդեվրոպական -ու-ով հիմքերի համար հմմտ. կիզուց՝ կիզում բայից.

-ուցֆ՝ բարուցֆ, լալուցֆ, մուլուցֆ. նույն ծագումն ունի, ինչ -ուց-ը՝ հոգնակերտի հավելմամբ, որը և հատուկ գոյականական արժեք է տվել.

-ուֆ՝ ալուֆ, ֆամուֆ, գիներֆուֆ, գիներֆուֆ. կազմված է -ու² ածանցի և -ֆ հոգնակերտի բաղադրությամբ.

-ոֆ (հմմտ. -աֆ)՝ բարիոֆ (բարոֆ), բորբոֆ, փորոֆ. ծագում է հ.-հ. *-k(o)- ածանցից՝ նախորդող -ո- հիմքային տարրով (բարի, -ոյ, բորբ, -ոյ, փոր, -ոյ).

-չեայ՝ առհաւատչեայ, աւետչեայ. կազմված է -իչ և -եայ ածանցներից.

-չոտ՝ երկչոտ. հավանաբար կազմված է -իչ և -ոտ ածանցներից, թեև *երկիչ ձևը չի ավանդված.

-չուտ՝ խաւարչուտ. կազմված է -իչ և -ուտ ածանցներից.

-սանն. տե՛ս -անն.

-տի՝ մանկտի. կարելի է ենթադրել, որ ինչպես -ոտի հավաքականակերտ ածանցը կազմված է -ոտ և -ի ածանցներից, այնպես էլ -տի-ն կազմված է -ուտ և -ի ածանցներից. սակայն այս ենթադրության համար առայժմ որոշակի ապացույցներ չկան.

-րի՝ բերրի. նկատի ունենալով հիմքի հնդեվրոպական ծագումը՝ պետք է ենթադրել -րի ածանցի համար հնդեվրոպական աղբյուր՝ թերևս *-rī(o)- (*-r(o)-*-i(o)-) բաղադրյալ ածանցը, որ բերրի-ի գեպքում պիտի դրվեր

Է 2. Աճառյանը (ՀԱԲ, 12, էջ 455) սլուր-ի -ուր-ը բլուր-ի -ուր-ի հետ միասին դիտելով որպես ածանց, մի այլ տեղ (ՀԱԲ, 42, էջ 224) ենթադրում է -ուլ ածանց՝ սուր-ուլ> սրուլ> սլուր անցումով.

*նհերե- տիպի հիմքի վրա (*նհերե-տյո- > բերի). սակայն հավաստի դուրսհանումը չկան. կան *-տո-ով կազմություններ *bher-tro-՝ «բերիչ, կրիչ, բերելու» կոնյուցտիվի և կարելի էր ենթադրել *bher-ē-t-jo > բերի, բայց իմաստային անցումը բավարար չափով չի հիմնավորվում:

Ռերված տվյալների հիման վրա և նկատի ունենալով հայոց լեզվի պատմության մի շարք փաստեր՝ կարելի է տարբերել հայերենի վերջածանցների ծագումնաին հետևյալ շերտերը.

1. Բնիկ հնդեվրոպական շերտ: Հայերենի ածանցների հիմնական շերտը կազմում են հնդեվրոպական նախալեզվից ժառանգված՝ որոշ ձևափոխություններ հին հայերենում դործող և մեծ մասամբ ժամանակակից հայերենին անցած վերջածանցները: Դործառական արժեքի տեսակետից դրանք բաժանվում են հին հայերենում դործուն ու արդյունավետ և ոչ դործուն ու անարդյունավետ խմբերի. վերջիններս սուլորաբար ընդգրկում են միայն սակավաթիվ կամ եղակի օրինակներ և րացահայտվում են հատկապես համեմատական-ստուգարանական վերլուծության միջոցով: Առաջին խմբի ածանցներն էլ հնդեվրոպական լեզվից հայերենին նույնությամբ չեն փոխանցվել. նրանց ձևավորման մեջ էական դեր են խաղացել ձևաբանական և հնչյունական մի շարք դործընթացներ, մասնավորապես բառի ձևափոխության կազմի վերափոխությունը և ածանցների հիմքերի ու ածանցների սահմանների տեղաշարժը, ածանցների բաղադրումը և հնքերի վրա նորերի հավելումը, համարանությունը (անալոգիան) և բաղադրությունը (կոնտամինացիան), վերջավանկների թուլացումը կամ անկումը և հայերենին հատուկ հնչյունական այլ կարգի փոփոխությունները: Այս բոլորի հետևանքով հնդեվրոպական միևնույն ածանցի բաղադրի վրա ձևավորված շատ ածանցներ ընկալվում են ոչ թե որպես միևնույն ածանցի դիրքային տարբերակներ, այլ որպես միանգամայն տարբեր ածանցներ: Հնդեվրոպական ածանցների բաղադրի վրա ձևավորված բաղադրյալ ածանցների մի մասի համար հնարավոր չէ պարզել կազմվել են նրանք դեռ հնդեվրոպական շրջանում, թե՛ հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն ածանցներից: Մի շարք դեպքերում էլ դժվար է ասել՝ տվյալ ածանցի մեջ տեղ դրած ձայնավոր տարրերը գալիս են հնդեվրոպական շրջանից, թե՛ կազմավորվել են հայերենում՝ մասնավոր, վերջավանսային ձայնավորների անկումից հետո՝ պահպանվելով բառամիջում և ընկնելով բառավերջում, դրանով իսկ ստեղծելով առաջինների՝ ածանցների անցնելու հնարավորություն: Շատ դեպքերում էլ առկա են և՛ առաջին, և՛ երկրորդ դեպքերը, այսինքն՝ հնդեվրոպական շրջանից եկող ձայնավորները, հատկապես ա-ն, համաբանությամբ տարածվել են նախապես այլ ձայնավորներով վերջացող հիմքերի վրա: Սրա մի դրսևորումն էլ ա հոդակապի առաջացումն է, որ հաճախ փոխել է ածանցների բնույթը, առաջ բերել հոդակապավոր և անհոդակապ տարբերակներ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հնդեվրոպական շերտ անվանումը որոշ չափով պայմանական է. հայերենի հնդեվրոպական ծագման ածանցները գերակշռող մեծամասնությամբ իրենց կազմով նույնությամբ չեն համընկնում հնդեվրոպական ածանցների հետ:

Հնդեվրոպական ածանցների բաղադրի վրա ձևավորված հայկական ածանցներից են՝ -(ա, ե, ի, ու)յ, -(ա, ե) լի, -ակն, -աղ, -այն, -անի, -(ա)-սուն, -աստ, -ատ (?), -արի, -(ա, ե)ցի, -ալք, -ալղ (-ող), -ալոք (-ուր), -ալ, -եալ, -եանի, -եալ, -եմն, -եստ, -(ե)րադ, -ել, -եք, -եքեան, -էնք, -ի, -իկ, -իմ, -իչ (-ույ), -իստ, -իք, -իղ, -իմ, -իւր, -մ, -մն, -ն, -նի, -շի (?), -ոյ, -ոյք, -ոյլ, -ոյր, -որ, -որդ, ոց, -ու, -ուք, -ուքիմ, -ուլ, -ուկ, -ումն, -ունդ, ուստ, -ուտ (?), -ուր, -ուց, -ոք, -րի:

Եթե քննությունը կատարենք հակառակ հարաբերությամբ՝ հնդեվրոպական ածանցներից գնալով դեպի հայերենի ածանցները, ապա կարելի է ասել, որ առաջինները հանդես են գալիս որպես վերջիններիս կազմիչներ հետևյալ դեպքերում՝ *(e)no-, *-ino- (-ն, -այն, -ին), *(e)ro- (-ար, -եար,

-երեւակ, -(ե)րարդ, -իր, -ար), *-es/os- (-ոյ), *-i/o- (-ի, ալիւ -ի-f, -անի, -ենի, -նի), *-i/ōn (-իւն), *-k(o)- (-աֆ, -նֆ, -ֆ- ներ-f-իւն), *-kōn (-կն, -իկ, -ուկ), *-lo- (-(ա, ե, ի, ու)լ, -(ա, ե)լի, -եալ, -աղ, -իղ/լ, -իւլ), *-men/ոմ (-մն, -ումն, ուն (?), -ուն), *-mo- (-մ), *-ōd- (-ոմ), *-sk(?)o- (-ա, ե/ցի, -իցս, -ոց, ուց), *-sti- (-ստ, -եստ, -իտ, -ուտ), *-tel/tl- (-ոյլ, -աւլ), *-ter/o, r/o, *-un/o- (-արդ, -(ե)րարդ, *-ti- (-ոյք, -ունդ):

Ինչպես կտեսնենք ստորև, մի շարք ածանցներ (-ած, -աւոք/ -աւոր, -(ա)-սուն) ձևավորվել են հնդեվրոպական բարդությունների երկրորդ բաղադրիչների, մի շարք ածանցներ էլ (-եւ, -եւիւն, -ալիւն)՝ հնդեվրոպական մասնիկ-վերջավորությունների բազայի վրա:

2. Փոխառյալ շերտ: Զգալի թիվ են կազմում հայերենի փոխառյալ ածանցները: Սրանց մեջ առուծի բաժինը պատկանում է իրանական ծագման ածանցներին: Պարթևերենից, միջին պարսկերենից և իրանական այլ աղբյուրներից կատարված մեծաքանակ փոխառությունների մեջ քիչ չեն եղել այնպիսիները, որոնց մեջ առկա է եղել ածանցելի ու ածանցյալ հիմքերի հակադրությունը, և որոնց վերլուծության հիման վրա գիտակցված ածանցները տարածվել են բնիկ հայերեն ու այլ աղբյուրներից փոխառված հիմքերի վրա: Իրանական ծագման ածանցների հետ կապված կարելի է նշել երկու էական հանգամանք. 1) հայերենի իրանական փոխառությունները գալիս են գերազանցապես վաղ պարթևական, մասամբ նաև մարական ու հին պարսկական աղբյուրներից և հաճախ պահպանել են միջնավանկային ա (a) ձայնավորը, որ ավելի ուշ ընկել է. մասամբ սրանց համաբանությամբ, մասամբ էլ ա հոդակապի տարածմամբ իրանական ծագման ածանցների մեջ շատ են սկզբնական ա-ով ձևերը. երբեմն էլ զուգահեռաբար հանդես են գալիս ա-ով և առանց ա-ի ձևեր (հմտ. -ալիւն և -կաւն). 2) այն դեպքերում, երբ իրանական ածանցները ձևով և իմաստով ու գործառնությամբ մոտ են եղել հարկական ծագման ածանցներին, երբեմն բաղադրվել են նրանց հետ և առաջ բերել յուրատեսակ հիբրիդային ձևեր. այսպես, օրինակ, իրանական -vāz ածանցը բաղադրվել է հայերեն -(ա)ւոք-ի հետ, և առաջ են եկել դատաւոք տիպի ձևեր՝ vāz(a)vār-ից: Ինչպես որ հնդեվրոպական ծագման մի շարք ածանցներ գալիս են ոչ թե հնդեվրոպական բուն ածանցներից, այլ բարդությունների երկրորդ բաղադրիչներից, այնպես էլ հայերենի իրանական ծագման մի շարք ածանցներ ներկայացնում են իրանական բարդությունների երկրորդ բաղադրիչներ և ածանցակերպներ: Առանձին դեպքերում հնարավոր չէ ճշգրտել՝ հայերենի տվյալ վերջաածանցները գալիս են իրանական համապատասխան բաղադրությունների երկրորդ բաղադրիչներից, թե՞ ածանցական (ածանցակերպային) արժեք են ստացել հայերենում, մանավանդ որ իրանական համապատասխան բաղադրիչները կարող էին ընդլայնել և հաճախ իրոք ընդլայնել են իրենց գործառնությամբ. ակնհայտ է, որ, օրինակ -(ա)գոյն, -(ա)պէս ածանցները իրենց բուն գործառնական արժեքները ձեռք են բերել հայերենում: Մեր ցանկում տեղ գտած իրանական ծագման ածանցներն ու ածանցակերպներն են՝ -ագաւ, -(ա)գիւն, -ագոյն, -ագաւն, -ակ(1)(?), -ակ(2), -(ա)կաւն, -(ա)կաւր (-(ա)կեր, -(ա)կետ), -այ, -ան(2), -ան(3), -անակ, -անդակ, -անդի(կ), -անի(2), -(ա)պաւն, -(ա)պաւնակ, -(ա)պէս, -(ա)ստան, -(ա)տակ, -աւաւն, -աւէն, (-երէն?), -աւսնդ, -աւսնդակ, -աւէտ (?), -աււէն, -եակ, -եաւն, -եկաւն, -էն, -էն(1), -թաւ, -իկ(2), -իշ, -կէն, -նան, -ոյկ, -ուկ(2) (?), -ունի: Հնարավոր է նաև -նակ-ի իրանական ծագումը:

Ավելի դժվար է լուծել խեթալուվական և ուրարտական ծագման ածանցների հարցը՝ խեթական -uZZi-ի նմանութունը հայ -ոց և -ուն (պարկուն) ածանցների հետ պատահական պիտի համարել: Ինչ վերաբերում է ուրարտական ծագման ածանցների հարցին, ապա կարելի է ասել հետևյալը. 1) հնարավոր է ծառանունների -ենի, տոհմանունների և տեղանունների -ունի(f) ածանցների ուրարտական ծագումը. 2) մեր «Հայոց լեզվի պատ-

մոլիյանս մեջ նշված են մի շարք բառեր, որոնց մեջ, թերևս, պահպանվել են ուրարտական միջանկյալ կազմությունները. սրանց կողքին հնարավոր է խնդ-ել, ճախող-ել ձևերի -ադ-ի ուրարտական ծագումը. 3) կան անհայտ ծագման մի շարք ածանցներ, որոնց համար ամենից ավելի հավանական է ենթադրել ուրարտական ծագում՝ -աշ, -առաւտ, արիմ/-երիմ, -(ե)կի(ն): Վիճակի է մնում կարուակ(կարուակ) ձևի մեջ -ուակ արմատի առանձնացման հարցը՝ ըստ կար արմատի ուրարտական, թե քարթվելական ծագման վարկածներին:

3. Խաղաղության ասանցների շերտ: Հայերենի ածանցների զգալի մասը ներկայացնում է բնիկ հնդեվրոպական և փոխառյալ ածանցների տարբեր համակցություններով բաղադրված շերտը: Ի տարբերություն շարակարգորեն իրար հաջորդող ածանցների, որոնք կարող են հեշտությամբ իրարից բաժանվել, բաղադրյալ ածանցները միասնական ամբողջություններ են, որոնք հաղթանակ են գալիս մեկ ածանցի գործառնությամբ: Սրեք ածանցների սովորական շարքի դեպքում ածանցների և ածանցյալի հակադրությունը վերլուծության յուրաքանչյուր աստիճանում որոշակի է, ապա սխառական ածանցների դեպքում այդպիսի որոշակիություն չկա, և բաղադրյալ ասանցի բաղադրիչները կարող են նման հակադրություններ կամ ընդհանրապես չստացվել, կամ ստեղծվել սխալ առանձին դեպքերում: Բացի այն ածանցներից, որոնք բաղադրված են երկու կամ ավելի ածանցներից, կան ածանցներ, որոնք բաղադրված են՝ 1) բուն ածանցական և հիմքակազմ, 2) բուն ածանցական և բառաթևերային, 3) բուն ածանցական և ածական կազմիչներով: Բաղադրյալ ածանցների մեջ դրված բուն ածանցով և հիմքակազմ տարրերով կազմավորվածները լարբերվում են նախորդ երկու՝ բնիկ հնդեվրոպական և փոխառյալ շերտերում դրված համապատասխան ածանցներից նրանով, որ փոխառյալ նորակազմություններ են՝ սովորաբար հիմքային տարրերի որոշակի գործառնական արժեքով. այսպես, եթե բնիկ հնդեվրոպական շերտի մեջ դրված -աց ածանցի -ոն դալիս է հնդեվրոպական հին թեմատիկ հիմքերի ձայնավորից, որ միայն է հ.-հ. *sk(ʷ)(o)-ից ծագող ց-ի հետ և տվել մեկ միասնական ածանց, որ վերլուծելի է միայն պատմականորեն, ապա բաղադրյալ շերտի մեջ դրված -անոց ածանցի -ան- տարրը վերլուծելի է -ան- հիմքային տարրի և բուն -ոց ածանցի հենց հին հայերենի շրջանում: Բուն ածանցական և բառաթևերական կազմիչներով ածանցները երկու տիպի են. մի դեպքում բուն ածանցը նախորդում է բառաթևերական արժեք ունեցող կազմիչին (հմտ. -ի՛ -ի + -է), մյուս դեպքում, ընդհակառակն, բառաթևերական արժեքի կազմիչն է նախորդում ածանցականին (հմտ. -ովին՝ -ով + -ին). առաջին տիպի մեջ հաճախադեպ են հին հայերենի -է հոգնակերտով կազմությունները, որոնց մեջ -է-ն փաստորեն ձեռք է բերել բառակազմական արժեք:

Հայերենի բաղադրյալ ածանցներն են՝ -ածոյ, -ակի (?), -այնի, -այք, -անաւո (?), -անի՛, -անն (-սանն), -անոց, -անուտ, -անի՛, -անք, -պատիկ, -աստի, -արիմ/-երիմ (?), -ացու, -անք, -բի, -(ե)կի(ն), -եղէն, -եղի, -ենի (?), -երեակ, -(ե)րաւո, -եցիկ, -եկին, -եկան/-եկին, -ինք, -իցս, -իք, -կի (?), -կոտ, -կու, -նի (?), -ոյն, ոյք, -ովին, -ոտի, -ուած, -ութին (?), -ունակ, -ութի՛, -ունք, -ուցք, -ուք, -չեայ, -չոտ, -չուտ, -տի (?):

4. Դերածանցական շերտ: Դերածանցների (ածանցների դեր կատարողների) անվան տակ միավորվում են այն ածանցները, որոնք բառային ծագում ունեն, այսինքն՝ առաջացել են բարդությունների բաղադրիչներից: Այս շերտի մեջ չեն մտնում բուն ածանցակերպները, որոնք գտնվում են ածանցադրման ճանապարհին՝ -ա-կալ, -ա-կից, -ա-հաւ և այլն, այլ միայն այն բաղադրիչները, որոնց ածանցացման գործընթացը կարելի է հիմնականում ավարտված համարել. և տարբերություն ածանցակերպների՝ սրանք տեղ են գտել վերևում բերված ածանցների ընդհանուր ցանկում: Դերածանցական կամ ածանցադրման շերտի մեջ մտնում են, մասնավորապես, հետևյալ

երեք տիպի ածանցները. 1) այն ածանցները, որոնց ծնունդ տված միավորները հին հայերենում արդեն բառային ինքնուրույն գործածություն չեն ունեցել. այդպիսիք են բնիկ հնդեվրոպական բաղադրիչների բազայի վրա ծագած -աւօր (-աւօր), -(ա)սուհ և իրանական բաղադրիչների բազայի վրա ծագած -աթէա, -արան ածանցները. սրանց թվին պետք է դասել պատմականորեն ածանցների մեջ մտցված -ամն-ը, որի ծագումն անհայտ է, և -անդ (հ)-ն, որի կապը անդաստակ-ի անդ-ի հետ խզված է. 2) այն ածանցները, որոնք հնչյունափոխության հետևանքով խզել են կապը իրենց ծնունդ տված բառերի հետ. սրանք հիմնականում բառասկզբնային հ-ի անկմամբ ծագած ածանցներն են՝ -աւա, -ար, -եղ (?), -աւ. 3) այն ածանցները, որոնք հիմնականում կորցրել են իրենց բուն առարկայական իմաստները և ստացել գերազանցապես քերականական արժեք, այսինքն՝ կամ առաջին հերթին գործառական արժեք ունեն (մի խոսքի մասը է՝ խանցում են մի ուրիշի)՝ երբեմն հավելյալ իմաստափոխական արժեքով հանդերձ -արար, -ազար, -ազան, -ած, -անց, -(ե)ագ, այլև -ապէս, կամ մերձենում են բառաթեքական մասնիկներին (վերջավորություններին)՝ -ագոյն:

5. Փոխանցական շերտ: Հայերենի վերջածանցների ծագմանը նվիրված այբբենական ցանկում մենք, բնականաբար, տեղ չենք տվել հոլովման և խոնարհման այն ձևերին, որոնք բառակազմական արժեք են ստանում երկրորդաբար, և որոնց ծագման քննությունը բուն առումով ոչ թե պատմահամեմատական բառակազմության, այլ պատմահամեմատական ձևաբանության խնդիրն է: Դրանք են բայական -աց, -եաց, -ոյց հիմքակազմիչներից -ոյց-ը և անվանական հոլովաձևերի -աւ, -իւ, -ով, -ու, -ֆ, -աց, -ուց կազմիչները.

-ոյց՝ հանգոյց, ուտոյց, սառոյց, դասույց, կաթնասնոյց, ամրակառոյց.

-աւ՝ աղագաւ, դժուարաւ, դիւրաւ, իրաւ, կամաւ, կարգաւ, հարկաւ, հրապարակաւ, նեպաւ, մեծաւ, պատճառաւ, սակաւ.

-իւ՝ ագնիւ, լրիւ, խստիւ, հագիւ, հշտիւ, հշմարտիւ, սաստիւ, վագիւ.

-ով՝ բարով, դիւրով, լիով, խնամով, կիսով, նեպով, հշտով, մեղմով, չափով, ստիպով, փութով.

-ու՝ այժմու, աշու, առաջու, առաջատու, ժամու, ձախու, վաղու.

-ֆ՝ աղաւթֆ, անցֆ, ապարանֆ, արտասուֆ, աւելնֆ, բարֆ, դէմֆ, դիւրֆ, ելֆ, զարմանֆ, ժանիֆ, խաւսֆ, կուտֆ, հունձֆ, մուտֆ, վանֆ.

-աց՝ գիշերաց, դիմաց, խաղաց, հասարակաց.

-ուց՝ այգոյց, առաւատուց, վաղուց:

Կարելի է տարբերել հիմնականում բառաթեքական-ձևաբանական արժեք ունեցող մասնիկների բառակազմական արժեք ստանալու երկու հիմնական դեպք. 1) այդ մասնիկները նման արժեք են ձեռք բերում հիմնականում ոչ թե ինքնին, այլ իրենցով օժտված բառերի խոսքիմասային փոխանցմամբ (կոնվերսիայով) կամ հատուկ բառակազմական գործածությամբ. զգալի թվով դեպքերում բայական, հազվադեպ նաև անվանական արմատները ինքնուրույն (անկախ) գործածություն չունեն և կարող են այդպիսի գործածություն ստանալ միայն հիմքակազմական զանազան մասնիկներ կամ -ֆ հոգնակներ ստանալու միջոցով. սրանց փոխանցումը փաստորեն կատարվում է սովորական հիմքերի, այլ թվում՝ զրո հիմքերի նման. 2) այդ մասնիկները բառաթեքական-ձևաբանական արժեքին զուգակցում են բառակազմական արժեքը, այսինքն՝ հանդես են գալիս լրացուցիչ բառակազմական արժեքով.

մենք ածանցների ցանկի մեջ տեղ տվեցինք այնպիսի միավորների, որոնք ընդհանուր ծագում ունենալով հանդերձ՝ կամ տարրերով և նրանցից ձևավորման որևէ առանձնահատկությամբ, հատկապես ձայնդարձով, կամ այլ տարրերի հետ միասին կազմում են բաղադրյալ ածանցներ (հմմտ. —ել, —ելից). սակայն ածանցների ցանկում տեղ չդրեցինք մասնիկների մեջ էլ կան այնպիսիները, որոնք որոշ շահով կտրվել են ընդհանուր ծագումներից և ձևեր բերել բառակազմական ինքնուրույն դործածություն. մասնավորապես, կան դեպքեր, երբ հոլովակազմիչները հանդես են գալիս ոչ թե իրենց բնորոշ հիմքերի հետ, այլ տարածվում են այլ հիմքերի վրա, սովորական հոգնակի արժեքի փոխարեն գործածվում եզակիի արժեքով, ստանում բառակազմական մասնիկների իմաստների համար բնորոշ իմաստներ. այսպես, հոլովական —ով կազմիչը կարող է հանդես գալ ոչ միայն —ով հիմքերի դեպքում (լի—լից—լիով, շափ—շափուց—շափով և այլն), այլև ուրիշ հիմքերի դեպքում՝ ստանալով իսկական մակբայական ածանցի արժեք՝ համապատասխան տատանվող ձևերով՝ նշդի—նշդով. այսուհետև, —ուց կազմիչով օժտված ձևերը յուրատեսակ անհղական գործածությամբ ժողովրդագիտական լեզվում (հմմտ. ժամանակակից հայերենի բացառականի —ից և —ուց վերջավորությունները) կարող են հանդես գալ մակբայական արժեքով՝ այգ—այգուց (>բորո. էգուց), ընդ որում հանդիպում են —ուց—ից տարբեր հոլովներով կամ նախդրավոր զուգահեռ ձևեր՝ առաւաւտուց—առաւաւտուց, վաղուց—վաղիւ, այգուց—յայգուց:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- Արեւիյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1931;
 Արամյան Ա. Ա., Գրաբարի ձևերի, 2-րդ հրատ. Ե., 1958;
 Արամյան Ս., Ժամանակակից դրական հայերեն, Ե., 1981;
 Ալիևյան Ն., Դասական հայերենը և Վիեննայի Մխիթարյան դպրոցը, Վիեննա, 1932;
 Ալիևյան Ն., Մականունակերտ ածանցներ հայերենի մեջ, «Հանդես ամսօրյա», 1947, էջ 435—437;
 Աղայան Է., Բառակազմություն, «Հայոց լեզու» գրքում, 1, Ե., էջ 369—472;
 Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984;
 Անադյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 1—2, Ե., 1940—1951;
 Անադյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, 1—5, Ե., 1952—1965;
 Անադյան Հ., Հայերեն արմատական բառարան, 2-րդ հրատ., 1—4, Ե. 1971—1979;
 Այալեյան Ա., Քննական քերականություն աշխարհարար կամ արգի հայերեն լեզվի, Վիեննա, 1866;
 Առաքելյան Վ. Դ., Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981;
 Առաքելյան Վ. Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Ե., 1984;
 Անտիֆեան Գ., Սիւմելեան Խ., Ազեբեան Մ., Նոր բառերի հաշվառման լեզուի, 1—2, Վենետիկ, 1836—1837;
 Բաղդասարյան Ա., Հայերեն քերականության ի պետական զարգացումը, Վենետիկ, 1852;
 Դալստյան Մ., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978;
 Դալստյան Խ., Ցանգարան կամ բառգիրք յանգաց հայկազեան լեզուի, Թեոդոսիա, 1862;
 Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայոց լեզվում, Ե., 1963;

- Էլոյան Ս., Բառակազմություն, «Ժամանակակից հայոց լեզու» գրքում, 1, Ե., 1979.
 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, 1—4, Ե., 1969—1980.
 Հայոց լեզվի պատմության հարցեր, Ե., 1981.
 Հովսեփյան Լ., Գրարարի բառակազմությունը, Ե., 1987.
 Ղափանցյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Ե., 1965.
 Մուրադյան Ա., Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971.
 Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955.
 Ջանեկյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Ե., 1954.
 Ջանեկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան, Ե., 1987.
 Ջանեկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974.
 Ջանեկյան Գ., Հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989.
 Սուֆիաշյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982.
 Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ե., 1955.

- Григорьев В. П. О границах между словосложением и аффиксацией.—Вопросы языкознания, 1956, 4.
 Джаукян Г. Б. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982.
 Джаукян Г. Б. О соотношении хайасского и армянского языков. — Историко-филологический журнал, 1988, 1—2.
 Земская Е. А. Современный русский язык. Словообразование, М., 1973.
 Капанцян Г. А. Историко-лингвистические работы. 1—2, Ереван, 1956—1975.
 Манучарян Р. С. Словообразовательные значения и формы в русском и армянском языках, Ереван, 1981.
 Туманян Э. Г. Древнеармянский язык. Москва, 1971.
 Улуханов И. С. Словообразовательная семантика в русском языке, М., 1977.
 Шанский Н. М. Очерки по русскому словообразованию, М., 1968.

- Bailey H. Armeno-Indo-Iranica, TPhS, 1956, pp. 88—126.
 Bailey H. Ambages Indo-Iranicae, AION-L I, 1959, pp. 113—146.
 Bailey H. Śrī viśa Śura and the Ta-uang, Asia Major II, 1964, pp. 1—26.
 Bailey H. Zorostrīan Problems in the 9th Century Books, Oxford, 1971.
 Bănăţeanu V. Sufixe urartice în armeană clasică, SCL XI, 1960, pp. 73—101.
 Bănăţeanu V. Terminologia arborilor în limba armeană, SCL XL, 1960, pp. 359—375.
 Bănăţeanu V. Urartean Suffixes in Classic Armenian, „Revue Roumaine de Linguistique” VI, 1961, pp. 85—107.
 Belardi W. Sull' origine delle voci armene antiche, RL 5, 1962, pp. 149—169.
 Benveniste E. Etudes Iraniques, TPhS, 1945, pp. 39—78.
 Benveniste E. Remarques sur les composés arméniens en *-pet*, HA 75, 1961, pp. 631—640.
 Bolognesi G. Le fonti dialettali degli imprestitti iranici in armeno, Milano, 1960.
 Bolognesi G. Studi Arment. RL V, 1962, pp. 105—127.
 Bolognesi G. Rapporti lessicali tra l'armeno e l'iranico, RIL 96, 1962 b, pp. 235—258.
 Bosshardt H. Die Nomina auf *-əuc*, Zürich, 1942.
 Brugmann K. Grundriß der vergleichenden Grammatik der Indogermanischen Sprachen, Vol. II, I. Strassburg, 1906 (1967).

- Bugge S. Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache, KZ 32, 1893.
- Dumézil G. Notes sur quelques tournures et formes participiales de l'arménien, BSL 32, 1938.
- Djahukian G. The Armenian suffixes of Iranian origin. Darmstadt, 1959.
- Godel P. Diachronic Armenian, „Current trends in Linguistics“, The Hague, 1971.
- Godel P. An Introduction to the study of Classical Armenian, Wiesbaden, 1975.
- Greppin J. On the development of Armenian *mutn* and *juhn*, REArm. VIII, 1971, pp. 1—4.
- Greppin J. The Middle Persian Nominal Suffixes in Classical Armenian, REArm. X, 1973a, pp. 1—10.
- Greppin J. Comments of Some Armenian Suffixes in Substratum Origin, „Linguistique Balkanique“ 17/3, 1973, pp. 65—71.
- Greppin J. The Relationship of Arm. *-awn* and Grk. *-ων*, REArm. X, 1973, pp. 11—20.
- Greppin J. Classical Armenian nominal suffixes, Wien, 1975.
- Hübischmann H. Armenische Grammatik, Hildesheim, 1897 (1962).
- Hübischmann H. Die altarmenischen Ortsnamen. Strassburg, 1904 (1969).
- Jensen H. Altarmenische Grammatik, Heidelberg, 1959.
- Karst J. Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Strassburg, 1901 (1970).
- Karst J. Geschichte der armenischen Philologie, Heidelberg, 1930.
- Karst J. Grundzüge einer vergleichenden Grammatik des Ibero-Kaukasischen, 1, Strassburg, 1932.
- Leroy M. Les composés arméniens en *-pet*, AIPHOS 15, 1960, pp. 109—128.
- Leroy M. Suffixes d'origine iranienne dans la toponymie arménienne, „VI Internationaler Kongress für Namenforschung, Kongressberichte“, 3, 1961, pp. 517—521.
- Leroy M. Les mots arméniens in *-aren*, „Memorial du cinquantième 1911—1964. Ecole des langues orientales anciennes de L'Institut catholique de Paris. Travaux de l'Institut catholique de Paris“, 10, 1961.
- Meillet A. Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1913.
- Meillet A. De la composition en arménien, MSL 18, 1911, pp. 245—270.
- Meillet A. Les adjectifs arméniens en *-un*, BSL 22, 1927, pp. 21—22.
- Meillet A. Les noms du type *t'éd'un*, REArm. 8, 1928, pp. 1—6.
- Meillet A. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936.
- Meillet A. Etudes de linguistique et de philologie arméniennes, Lisbonne, 1962.
- Olsen B. The Proto-Indo-European Instrument Noun suffix **-t'om* and its Variants, Copenhagen, 1988.
- Pedersen H. Zur armenischen Sprachgeschichte, KZ 38, 1905, pp. 191—240.
- Pedersen H. Armenisch und die Nachbar-sprachen, KZ 39, 1906, pp. 334—385.
- Petersson H. Beiträge zur armenischen Wortkunde, KZ 47, pp. 240—291.
- Petersson H. Arische und armenische Stullen, „Lunds Universitet Årsskrift“, N. F. Adv. 1, Bd. 16, Nr. 3, 1920.
- Schmitt R. Die Erforschung des Klassisch-Armenischen seit Meillet (1936), „Kratylos“, 17, 1, 1972 (1971), pp. 1—68.
- Schmitt R. Grammatik des Klassisch-Armenischen, Innsbruck, 1931.
- Schwyzer E. Ein armenisch-griechisches Nominalsuffix, „Museum Helveticum“, 3/2, 1946, pp. 49—58.
- Schwyzer E. Griechische Grammatik, Vol. 1, München, 1953, pp. 455—544.

Solta G. Die Stellung der Armenischen in Kreise der Indogermanischen Sprachen, Wien, 1960.

Solta G. Die armenische Sprache, „Armenisch und kaukasische Sprachen Handbuch der Orientalistik“, 1/7, 1963.

ПРОИСХОЖДЕНИЕ ДРЕВНЕАРМЯНСКИХ СУФФИКСОВ

Академик НАН РА Г. Б. ДЖАУКЯН

Резюме

Несмотря на значительное количество работ по армянскому словообразованию происхождение многих армянских суффиксов еще не совсем ясно. В статье делается попытка собрать воедино наши знания о происхождении суффиксов и дать наиболее вероятные решения. Приводится полный список древнеармянских неглагольных суффиксов с соответствующими сведениями об их происхождении, затем материал классифицируется и устанавливаются их генетические слои. Выделяются суффиксы: 1) исконно индоевропейские, 2) заимствованные, 3) составные, 4) восходящие к полноточным словам и 5) восходящие к окончаниям, приобретшим словообразовательное значение.